

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ժողովածուն պարունակում է Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վերաբերյալ ամփոփ վիճակագրական ցուցանիշների դինամիկ շարքեր, որոնք կարող են լուսաբանել ոլորտի փոփոխությունները վերջին յոթ տարում:

Տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես Հայաստանի Հանրապետության կտրվածքով, այնպես էլ ՀՀ մարզերով, տնտեսության տարբեր ոլորտներով, հատվածներով, սեռատարիքային խմբերով և կրթական մակարդակով:

Յուրաքանչյուր բաժնի վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումները բերված են տվյալ բաժնում:

Ժողովածուն պատրաստելիս օգտագործվել են ինչպես պետական վիճակագրական և գերատեսչական հաշվետվությունների, այնպես էլ մասնավոր հատվածի մինչև 100 աշխատող ունեցող կազմակերպություններում և տնային տնտեսություններում իրականացվող աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքները:

Մասնավոր հատվածի մինչև 100 աշխատող ունեցող կազմակերպությունների ընտրանքային հետազոտությունն իրականացվել է 1999-2003թթ.՝ ընդգրկելով 1890-3000 կազմակերպություն:

Տնային տնտեսություններում աշխատուժի ընտրանքային հետազոտությունն (S/S ԱԸՀ) իրականացվել է 1999թ., 2001-2003թթ. կիսամյակային պարբերականությամբ՝ մարտ և սեպտեմբեր ամիսների վերջին շաբաթվա դրությամբ՝ տարվա ընթացքում ընդգրկելով, համապատասխանաբար, 1075, 2064, 2322 (2002-2003թթ.) տնային տնտեսություններ: S/S ԱԸՀ տվյալները ներկայացված են տարեկան կտրվածքով և հաշվարկված են Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանության սկզբունքներին համապատասխան, ինչը հնարավորություն է տալիս վերջիններս համադրել միջազգային համանման ցուցանիշների հետ:

2002-2003թթ. մշտական բնակչության, ինչպես նաև զբաղվածության վերաբերյալ (վարչական վիճակագրության մասով) ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարիների նույնանուն ցուցանիշների հետ, քանզի վերահաշվարկվել են 2001թ. ՀՀ մարդահամարի արդյունքներով: Այդ նկատառումով էլ 2002-2003թթ. շարքը ներկայացված է առանձին:

Ժողովածուի մեջ կիրառված պայմանական նշաններ

- 0.0 չնշին մեծություն
- երևույթը բացակայում է
- ◇ տվյալները ճշգրտված են
- < մինչև
- > ավելի

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքների միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:

Ծանոթություն

S/S ԱԸՀ արդյունքների հիման վրա կազմված աղյուսակների համար կատարված է համապատասխան նշում, մնացած դեպքերում օգտագործվել են պետական վիճակագրական հաշվետվությունների և մասնավոր հատվածի մինչև 100 աշխատող ունեցող կազմակերպությունների հետազոտության արդյունքներով ստացված տվյալները: